ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հաստատված է
«Մասնագիտական կրթության որակի
ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2015 թվականի հունիսի 9-ի թիվ 1 որոշմամբ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Հաշվի առնելով «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) ՀՀ-ում բարձրագույն և միջին մասնագիտական կրթության որակի ապահովման գործում ունեցած դերը, կրթության որակի զարգացման միտումները անհրաժեշտություն է առաջանում որակի ապահովման գործընթացներում ձևավորել էթիկայի մշակույթ: Այդ նպատակով ՈԱԱԿ-ի համար հրամայական դարձավ էթիկայի և վարքագծի կանոններ (այսուհետ՝ Կանոններ) ունենալը:

Կանոնները իրենից ներկայացնում է գործունեության ուղեցույց՝ սահմանելով մասնակիցների էթիկայի և վարքի կանոնները որակի ապահովման գործընթացներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Կանոնների նպատակը

Սույն կանոնների նպատակը մասնակիցների էթիկայի և վարքագծի կանոնների սահմանումն է, որը կնպաստի էթիկայի մշակույթի ձևավորմանը որակի ապահովման գործընթացներում և աշխատանքային հարաբերություններում:

1.2. Կանոնների կիրառման ոլորտը

Սույն Կանոնները գործում են ՈԱԱԿ աշխատողների, Հոգաբարձուների խորհրդի անդամների, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների, փորձագետների (այսուհետ՝ մասնակիցներ) շրջանակում՝ որակի ապահովման գործընթացների և աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում:

1.3. Հասկացությունները

1) **«Շահերի բախում».** Մասնակիցների մասնավոր շահերի (նյութական և ոչ նյութական) և ՈԱԱԿ շահերի անհամատեղելիություն:
2) **«ՈԱԱԿ շահ».** Օրենքներով, ՈԱԱԿ կանոնադրությամբ և այլ ներքին փաստաթղթերով ՈԱԱԿ-ին վերապահված լիազորություններ և իրավունքներ:

3) **«Ծառայողական էթիկա».** Մասնակիցների ծառայողական լիազորությունների իրականացման ուղենիշներ:
4) **«Մասնագիտական էթիկա».** ՀՀ օրենսդրությանը և համընդհանուր ընդունված բարոյական նորմերին համապատասխան ընդունված մասնագիտական վարքագծի էթիկայի չափանիշներ:
5) **«Ոտնձգություն և բռնություն».** *Ոտնձգությունը* խոսքային, մարմնի կամ ժեստերի լեզվի միջոցով արտահայտված կամ որև է այլ վարքագիծ, որը ստեղծում է ահաբեկող, վիրավորական կամ թշնամական աշխատանքային մթնոլորտ: *Բռնությունը*՝ ֆիզիկական կամ հոգեբանական ագրեսիա, ահաբեկում, վիրավորանք, սպառնալիք:
6) **«Երրորդ անձ».** Երրորդ անձ է համարվում այն անձը, ով օրենքի ուժով կամ պայմանագրային հիմունքներով չի կարող տիրապետել համապատասխան տեղեկատվության:
7) **«Գաղտնիություն».** Մասնակիցները իրենց ծառայողական և մասնագիտական լիազորությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը պարտավոր են չհարապարակել կամ այլ ձևով հայտնի դարձնել երրորդ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

1.4. Աղբյուրները

Սույն կանոնները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին, ենթօրենսդրական ակտերին, ՈԱԱԿ կանոնադրությանը, ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկին:

1.5. Մասնակիցների պարտավորությունը և պատասխանատվությունը

Մասնակիցները իրենց ծառայողական լիազորությունները և մասնագիտական գործունեությունը իրականացնելիս պարտավոր են հետևել և հարգել սույն Կանոնների դրույթները, գործել դրանց համապատասխան:
Սույն կանոնների խախտումը հիմք է կարգապահական պատասխանատվության համար:

2. ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՈԱԱԿ ԳՈՐԾՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

2.1. Արժեքները և սկզբունքները

Որակի ապահովման գործընթացներում և ներքին աշխատանքային հարաբերություններում մասնակիցները իրենց գործունեությունը ծավալելիս առաջնորդվում են ՈԱԱԿ-ի կողմից որդեգրած հետևյալ արժեքներով և սկզբունքներով:

1) **Օրինականություն.** ՈԱԱԿ-ը և որակի ապահովման գործընթացների վերոնշյալ մասնակիցները իրենց վերապահված լիազորությունները իրականացնելիս առաջնորդվում են ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով, որակի ապահովման ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով, ՈԱԱԿ-ի ներքին կանոններով:

2) **Անկախություն.** Անկախության սկզբունքը ենթադրում է, որ ՈԱԱԿ-ը և մասնակիցները գործում են անկախ՝ զերծ մնալով ամեն տեսակ քաղաքական, տնտեսական, կրոնական և այլ տեսակի ճնշումներից, հենվելով միայն իրավական ակտերի պահանջների վրա:
3) **Հանրային վստահություն.** ՈԱԱԿ-ը և մասնակիցները երաշխավորում են հանրության վստահությունը մասնագիտական կրթության որակի ապահովման հանդեպ՝ իրենց գործողություններում առաջնորդվելով օրինականության, անկախության, թափանցիկության, օբյեկտիվության սկզբունքներով:
4) **Թափանցիկություն.** ՈԱԱԿ-ը ապահովում է իր գործունեության լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով, ՈԱԱԿ կայք-էջով, ինչպես նաև ցանցաված շահագրգիռ անձ կարող է գրավոր դիմում ներկայացնելով՝ ստանալ տեղեկություններ իրեն հետաքրքրող հարցի վերաբերյալ օրենքի շրջանակներում:
5) **Հավասարություն.** ՈԱԱԿ-ը մասնագիտական կրթության ոլորտի շահակիցների համար ապահովում է հավասար հնարավորություններ և հասնելիություն, իսկ մասնակիցները իրենց գործունեությունը ծավալելիս և որոշումներ կայացնելիս լինում են անաչառ և պահպանում հավսարաության սկզբունքը:
6) **Օբյեկտիվություն և անկողմնակալություն.** Օբյեկտիվությունը և անկողմնակալությունը ենթադրում են, որ ՈԱԱԿ-ը և մասնակիցները իրենց գործունեությունը և լիազորությունները իրականացնելիս, որոշումներ կայացնելիս հիմնվում են բացառապես օբյեկտիվ փաստերի և իրողությունների վրա, դատողություններ և եզրահանգումներ անում ստուգված տեղեկությունների հիման վրա, զերծ մնալով որևէ տեսակի սուբյեկտիվ մոտեցումներից, ցանկացած տեսակի ճնշումներից (ֆինանսական, կոմերցիոն, հոգեբանական և այլն):
7) **Հաշվետվողականություն.** ՈԱԱԿ-ը և մասնակիցները իրենց գործողությունների համար հաշվետու են հանրությանը:

2.2. Վարքագծի կանոնները

Սույն Կանոններում ամրագրված արժեքների և սկզբունքների ոգուց ելնելով մասնակիցները իրենց գործողությունները և ՈԱԱԿ-ը իր գործունեությունը իրականացնելիս պետք է հաշվի առնեն վարվելակերպի հետևյալ կանոնները:

1) **Շահերի բախումից խուսափել.** Մասնակիցները որակի ապահովման գործընթացներին մասնակցության ժամանակ իրենց լիացորությունները իրականացնելիս պարտավոր են զերծ մնալ շահերի բախում առաջացնող գործողություններից կամ անգործությունից: Շահերի բախում առկա է, եթե.
   - ✓ մասնակիցները որակի ապահովման գործընթացներում մասնակցելիս ունեն ազգակցական, ֆինանսական, առևտրային կամ այլ նմանատիպ կապեր այն շահակիցների հետ հարաբերությունների ժամանակ, որոնց վերաբերյալ պետք է կայացնեն որոշումներ,
   - ✓ գտնվում են աշխատանքային կամ նմանատիպ այլ հարաբերությունների մեջ այն շահակիցների հետ, որոնց վերաբերյալ պետք է որոշումներ կայացնեն:

Շահերի բախում է առաջանում ոչ միայն ակտիվ գործողություններ իրականացնելով, այլ անգործությամբ: Անգործություն է համարվում իմանալ շահերի բախման մասին և չհայտնել:

Շահերի բախումից խուսափելու համար մասնակիցները գործընթացների ժամանակ հայտնում են ինքնաբացարկ և չեն մասնակցում գործընթացներին և որոշումների կայացմանը:

2) **Գաղտնիության ապահովում.** Մասնակիցները իրենց գործունեության ընթացքում պարտավոր են պահպանել գաղտնիություն իրենց ծառայողական լիազորությունները և մասնագիտական գործունեությունը իրականացնելուց հայտնի դարձած տեղեկությունների նկատմամբ: Գաղտնի տեղեկատվություն են համարվում՝
   - ✓ մասնակիցների անձնական տվյալները, անձնական տվյալներից օգտվել կարելի է միայն աշխատանքային կարիքներից ելնելով:
   - ✓ փորձաքննության ժամանակ ստացված հաստատությանը վերաբերող տվյալները այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն հրապարակվում:
   - ✓ ՈԱԱԿ-ին վերաբերող կամ ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների վերաբերյալ ցանկացած տեղկատվություն, եթե այն չի հրապարակվում զանգվածային լրատվության միջոցներով կամ ՈԱԱԿ կայքով:
3) **Ոտնձգության և բռնության արգելք.** ՈԱԱԿ-ում և ՈԱԱԿ-ից դուրս արգելվում է ցանկացած տեսակի ոտնձգությունը և բռնությունը՝ մասնակիզցների կողմից իրենց աշխատանքային գործաույթներն իրականացնելիս՝ որակի ապահովման շրջանակներում Աշխատավայրում արգելվում է պահել, տեղափոխել կամ օգտագործել զենք, զինամթերք, բացառությամբ այն մարմինների և աշխատողների, որոնք օրենքի ուժով ունեն զենք կրելու իրավունք:
4) **Համագործակցություն.** ՈԱԱԿ-ը խրախուսում է սերտ համագործակցությունը և մասնագիտական փոխադարձ աջակցությունը մասնակիցների միջև, այդ թվում շահակիցների հետ, ինչպես նաև հասարակության հետ անընդհատ կապի ապահովումը:
5) **Վստահություն և հարգանք.** ՈԱԱԿ-ը ապահովում է այնպիսի աշխատանքային միջավայր, որտեղ յուրաքանչյուրին վերաբերվում են պատվով, հարգանքով և արդարացի, որտեղ անձը հնարավորություն ունի զարգացնելու իր անհատական և կոլեկտիվ հնարավորությունները:
6) **Դրես կոդ և արտաքին տեսք.** ՈԱԱԿ աշխատակիցները պարտավորվում են, աշխատանքի ներկայանալ պատշաճ տեսքով, դասական կամ պրակտիկ ոճի հագուստով: Արգելվում է աշխատանքային օրերին ներկայանալ տոնական զարդերով, տոնական վառ դիմահարդարմամբ, զգեստները չպետք է լինեն թափանցող, լայն և գրգռիչ բացվածքներով, չկրել շատ կարճ զգեստներ, ներկայանալ սպորտային հագուստով:

3. ՈԱԱԿ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ, ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Հոգաբարձուների խորհուրդ

Հոգաբարձուների խորհրդի անդամները իրենց լիազորությունները իրականացնելիս առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ, ՈԱԱԿ կանոնադրությամբ, սույն կանոններով:

Հոգաբարձուների խորհրդի անդամները պարտավոր են իրենց առջև դրված պարտականությունները կատարել ժամանակին, բարեխղճորեն՝ իրականացնելով ՈԱԱԿ կանոնադրական նպատակները:

Հարգել գործընկերների կարծիքները, իրավունքներն ու օրինական շահերը, ազատորեն արտահայտել իրենց կարծիքը ցանկացած հարցի վերաբերյալ, իրենց գործողությունները իրականացնել և որոշումներ կայացնել՝ ՈԱԱԿ շահերին չհակասելով:

Աշխատանքային լիազորությունները կատարելիս առաջնորդվում են անկախության, անկողմանակալության, անաչառության, օրինականության, օբյեկտիվության, սկզբունքներով:

Ապահովում են աշխատանքային և ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունների պահպանումը:

Կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունների իրականացումը պարտավոր են համապատասխանեցնել օրենքներին, ենթօրենսդրական ակտերին, ՈԱԱԿ ներքին կարգերին և քաղաքականություններին, նպաստել համագործակցության զարգացմանը և խորացմանը պետական մարմինների, ուսումնական հաստատությունների հետ:

Անհարգելի չբացակայել նիստերից, աշխատանքային գործառույթները չօգտագործել անձնական նկատառումներով:

Աշխատանքային գործառույթները իրականացնելիս զերծ մնալ ամեն տեսակ ճնշումներից, հարկադրանքից:

Խուսափել շահերի բախում առաջացնող գործողություններց:

3.2. Հավատարմագրման հանձնաժողով

Հավատարմագրման հանձնաժողովի անդամները իրենց լիազորությունները իրականացնելիս առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ, ՈԱԱԿ Հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով, ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով, սույն կանոններով:

Հավատարմագրման հանձնաժողովի անդամները հավատարմագրման գործընթացների վերաբերյալ արտահայտում են իրենց չեզոք և անկախ կարծիքը, որոշումներ կայացնելիս հիմնվում են անկախության, անկողմնակալության, օրինականության և օբյեկտիվության սկզբունքների հիման վրա:

Պահպանում են ծառայողական և աշխատանքային գաղտնիություն, չեն օգտագործում իրենց պաշտոնական դիրքը՝ երրորդ անձանց շահերը առաջ տանելու համար:

Հանձնաժողովի անդամը հավատարմագրման գործընթաց անցնող ուսումնական հաստատության հետ շահերի բախման դեպքում պարտավոր է տեղեկացնել հանձնաժողովին և հայտնել ինքնաբացարկ:

3.3. ՈԱԱԿ ղեկավարություն (տնօրեն, ստորաբաժանումների ղեկավարներ)

ՈԱԱԿ ղեկավարությունը իրենց վերապահված լիազորությունները իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ՈԱԱԿ ներքին կարգերով և կանոններով, սույն Կանոններով, գործում ի շահ ՈԱԱԿ-ի:

Իր գործողություններում ղեկավարությունը գործում է բարեխիղճ, անաչառ, հավասարապես է ընդունում բոլոր աշխատակիցներին, իր գործունեությունը ծավալում է օբյեկտիվության և անկողմնակալության սկզբունքների շրջանակներում:

Ապահովում է հոգեբանորեն առողջ աշխատանքային և գործնական միջավայր, նպաստում աշխատողների մասնագիտական զարգացմանը և առաջխաղացմանը: Ձևավորում է աշխատանքի ներսում համագործակցային մշակույթ:

Շահակիցների հետ ապահովում փոխշահավետ, բարիդրացիական հարաբերություններ, ակտիվորեն տարածում ՈԱԱԿ արժեքները:

3.4. Փորձագետ

Որակի ապահովման շրջանակներում մասնագիտական ծառայություն մատուցելիս փորձագետը առաջնորդվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ մասնագիտական կրթության փորձաքննության անցկացման ձեռնարկով, սույն կանոններով՝ անկախության, օբյեկտիվության, անկողմնակալության, օրինականության սկզբունքների հիման վրա, պահպանում հարգանք ուսումնական հաստատության ներկայացուցիչների, գործընկերների և ՈԱԱԿ-ի հանդեպ:

Փորձագետը պատասխանատու է իր կողմից կայացված որոշումների, հայտնած կարծիքի և կազմած եզրակացությունների համար, որոնք հենվում են օբյեկտիվ փաստերի և տեղեկությունների վրա:

Փորձագետը պարտավոր է բարեխղճորեն կատարել իրեն հանձնարարված առաջադրանքները, խուսափել շահերի բախում առաջացնող գործողություններից, շահերի բախում առաջանալու դեպքում հայտարարել դրա մասին, հայտնել ինքնաբացարկ, խուսափել ցանկացած տիպի ճնշումներից, չտալ խոստումներ իր գործունեության շրջանակներում, չօգտագործել իր դիրքը շահագրգիռ անձանց շահերը առաջ տանելու համար:

Ուսումնական հաստատությունների հետ փոխգործակցության ընթացքում փորձագետը պարտավոր է պահպանել զսպվածություն, համբերություն, այլոց հայտնած կարծիքների և կայացրած որոշումների հարգում, փորձաքննության արդյունքների վաղաժամ հրապարակման կանխում:

Փորձագետը իր գործունեության ողջ ընթացքում պարտավոր է պահպանել գաղտնիություն, չհայտնել փորձաքննության վերաբերյալ տեղեկություններ երրորդ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Գործընկերների հետ հարաբերվելիս պահպանել հարգանք, խուսափել կոնֆլիկտային իրավիճակներ ստեղծելուց: Անհարկի չքննադատել գործընկերների արտահայտած կարծիքները, լինել հաղորդակցվող, կարողանալ աշխատել ինչպես անհատական այնպես էլ թիմային մակարդակով:

4. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. Սույն Կանոնների խախտման համար մասնակիցների համար նախատեսվում է կարգապահական տույժի հետևյալ տեսակները՝

1. նախազգուշացում
2. նկատողություն
3. խիստ նկատողություն:

Խախտման առկայության դեպքում Հոգաբարձուների խորհուրդի կողմից կազմվում է էթիկայի հանձնաժողով կոնկրետ գործով, որը իրավասու է քննել գործը և կայացնել որոշում: Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը նայել էթիկայի հանձնաժողովի ձևավորման և գործունեության կարգում:

<u>6. Եզրափակիչ դրույթներ</u>

6.1. ՈԱԱԿ Էթիկայի և վարքագծի կանոնները, նրանում կատարվող լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են ՈԱԱԿ Հոգաբարձուների խորհրդի կողմից՝ ՈԱԱԿ տնօրենի ներկայացմամբ:

6.2. Կանոնների անբաժանելի մաս են կազմում հավելվածները:

6.3. Կանոնների խախտումը հիմք է կարգապահական պատասխանատվության համար:

6.3. Կանոնները ուժի մեջ է մտնում ստորագրելու պահից: